«ԴԵԼՏԱՇԻՆ» ՍՊԸ

ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԱՐԱՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՋՐԱԳԾԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ

*Պատվիրատու **Ջրային կոմիտե***

Պայմանագիր **N ՋԿ-ԳՀԾՁԲ-24/5- 1**

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ

Հավելված 3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՎԵԼՎԱԾ

«ԴԵԼՏԱՇԻՆ» ՍՊԸ տնօրեն Վ. Կոբելյան

Նախագծի գլխավոր ճարտարագետ Վ. Կոբելյան

ք. Երևան
2024թ.

ՆԱԽԱԳԾԻ ԿԱԶՄԸ

ԳԻՐՔ 1. Տեխնիկական մասնագրեր

ԳԻՐՔ 2. Աշխատանքային գծագրեր

ԳԻՐՔ 3. Աշխատանքային ծավալներ

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ Ն Ե Ր

ՀԱՎԵԼՎԱԾ 1. Նախահաշիվներ

ՀԱՎԵԼՎԱԾ 2. Ծավալաթերթ-նախահաշիվ

ՀԱՎԵԼՎԱԾ 3. Ընդհանուր հավելվածներ

Հավելված N 1
«04» ապրիլի 2024թ. կնքված
ՋԿ-ԳՀԾՁԲ-24/3-Ն ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը ներկայացվում է ստորև***	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը
1	71241200/22	Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում - «Արազափ-1» պոմպակայանի մղման խողովակաշարի հիմնանորոգում	դրամ	[redacted]	1	ք. Երևան, Վարդանանց 13ա	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 45 օր

<u>ՉԱՓԱԲԱԺԻՆ 1</u>

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ***

Առաջադրանքի պայմանները

<u>Չափաբաժին 1</u>
Արազափ-1 պոմպակայանի մղման խողովակաշարի հիմնանորոգում

ՆԱԽԱԲԱՆ

«Արազափ-1» պոմպակայանը շահագործվում է 1979 թվականից: Պոմպակայանում տեղադրված է եղել 2 հատ 20 դ-6 մակնիշի, 5 հատ ցն 900-310 մակնիշի և 3 հատ 20 նդն մակնիշի պոմպեր (օգնող պոմպեր), որոնց միջոցով միայն առաջին աստիճանի տակ ոռոգվել է 1200 հա գյուղ. նշանակության հողեր:

<u>Առկա հիմնախնդիրների լուծումներն ու դրանց հիմնավորումը</u>

Պոմպակայանն ամբողջությամբ գտնվում է մաշված և քայքայված վիճակում, հաճախակիացել են վթարները և պոմպակայանում և մղման խողովակաշարերի վրա, մի քանի օրը մեկ անգամ տեղի են ունենում վթարներ:

Պոմպակայանը ունի 3 հատ մղման խողովակաշար, առաջին գիծը 2100 գծմ, երկրորդ և երրորդ գծերը յուրաքանչյուրը 4100 գծմ կառուցված DN 720, DN 630 և DN 530 միլիմետրանոց խողովակներով:

Ներկայումս պոմպակայանում տեղադրված է 1 (մեկ) հատ (երկուսի փոխարեն) 20Д-6 պոմպ (N7) I, II և III գոտիների համար:

Մղման խողովակաշարը մաշված և քայքայված է: Հաճախակիացել են խողովակաշարի վթարները:

Վերին գոտու համար տեղադրված կա 3 հատ ցն 900-310 (14М-12х4) մակնիշի պոմպեր: Վերին գոտին ունի 2 (երկու) գծով մղման խողովակաշար, կառուցված DN 720, DN 630 և DN 530 միլիմետրանոց խողովակներով: Նշված խողովակներից մեկ գիծը հնարավոր չէ շահագործել քայքայվածության պատճառով: Երկրորդ խողովակաշարն էլ է քայքայված, անընդհատ վերանորոգելով, առայժմ շահագործվում է: Ջրի պահանջարկի դեպքում, երբ միաժամանակ աշխատեցվում է 2 (երկու) պոմպ՝ ճնշումը բարձրացնելով հաճախակիանում են խողովակի վթարները, միանգամից մի քանի տեղով: Անընդհատ նորոգման անհրաժեշտություն է առաջանում՝ առաջացնելով ջրամատակարարման ուշացումներ:

Միայն 2023 թվականի օգոստոսի 1-ից մինչև սեպտեմբերի 11-ը ներառյալ խողովակաշարը վթարվել է 11 անգամ: Յուրաքանչյուր վերանորոգումից հետո մղման խողովակաշարը լցվում է 1 ժամում: Այդ պատճառով տեղի է ունենում յուրաքանչյուր անգամ և՛ ոռոգման ջրի կորուստ (նաև կրկնակի ոռոգում) և՛ էլ. էներգիայի գերածախս: 2023 թվականի օգոստոսի 1-ից մինչև սեպտեմբերի 11-ն ընկած ժամանակահատվածում ունեցել ենք 1250մ^3 x 11= 13750մ^3 ջրի կորուստ (խողովակի դատարկման, չհաշված կրկնակի ջրումները) և էլ. էներգիայի գերածախս՝ 1106 կվտ/ժ x 11= 12166 կվտ/ժ -ի:

Այժմ «Արազափ-1» պոմպակայանի իշխման գոտում կա 1215 հա գյուղատնտեսական ոռոգելի հողեր, որից վերին գոտու տակ՝ 710 հա: Քանի որ 2023 թվականի օգոստոսից վերագործարկվեց նաև «Արազափ-2» վերամղող ջ/կայանը, որը այժմ ոռոգում է 70 հա (որը ջրի առկայության դեպքում կհասնի մինչև 120 հա-ի) ,այդ իսկ պատճառով վերին գոտու ոռոգման ջրի պահանջարկը կավելանա 120 հեկտարին համապատասխան: Վերին գոտու հեռացնող ջրանցքի իշխման գոտում առկա է 830 հա (710+120) ոռոգելի հողեր, որից 2023 թվականին փաստացի մշակվում է 456 հա:

«Արազափ-1» ջ/կայանի վերին գոտու հեռացնող ջրանցքով ոռոգման ջուր է մատակարարվում Պ.Սևակ և Երասխ սահմանամերձ բնակավայրերին:

Անհրաժեշտ է իրականացնել հետևյալ աշխատանքները՝

- Շահագործող ընկերության կողմից առաջարկվում է ամբողջությամբ վերանորոգել N1, N2 և N3 պոմպերի 4100 գծ.մ երկարությամբ մղման խողովակաշարի հիմնական մասը, որի նախագծային տվյալներն են եղել DN=720մմx10մմ 1000գծ.մ, DN=630մմx8մմ 2350գծ.մ և DN=530մմx6մմ 500գծ.մ, որը հետագայում փոփոխության է ենթարկվել և 630մմ-ոց խողովակաշարի մոտ 1000 գծ.մ հատված փոխարինվել է 530մմ-ոց խողովակով:
- Նշված խողովակաշարի տրամագծերը ներկայացվել են շահագործող ընկերության կողմից, սակայն նախագծող ընկերությունը պետք է կատարի բոլոր անհրաժեշտ հիդրավլիկական հաշվարկները և ներկայացնի տվյալներ, թե 2 պոմպերի միաժամանակյա աշխատանքի դեպքում ի՞նչ տրամագծի և պատի հաստության խողովակաշար է անհրաժեշտ կառուցել, որ գլխամաս հասնի 400-450լ/վրկ ջուր, առկա ջրի պահանջարկը ամբողջությամբ բավարարելու համար:
- Նախագծող կազմակերպությունը պետք է դիտարկի նաև 2-րդ խողովակաշարի փոխարինման տարբերակը, հաշվի առնելով ընթացիկ ոռոգման աշխատանքները և խողովակաշարերի առկա իրավիճակը:
- N7 (20Д-6) պոմպի կամ շարժիչի խափանման դեպքում (չունենալով պահեստային պոմպ) դադարեցվում է ոռոգման ջրի մատակարարումը, մինչև կնորոգվի: Անհրաժեշտ է տեղադրել երկրորդ (պահեստային) պոմպն իր շարժիչով: Նախագծող ընկերությունը պետք է կատարի բոլոր անհրաժեշտ հաշվարկները և ներկայացնի թե ինչ հզորությամբ և արտադրողականությամբ աշխատող նոր պոմպ պետք է տեղադրել:
- Մաշված և քայքայված են մղման խողովակաշարերի վրա տեղադրված մեղմիչները (կոմպրեսատորները), որոնք անհրաժեշտ է փոխարինել նոր մեղմիչներով (թվով 23 հատ):
- Անհրաժեշտության դեպքում, պոմպակայանի անվտանգ շահագործման տեսանկյունից, անհրաժեշտ է նաև նախատեսել իրականացման ենթակա այն լրացուցիչ աշխատանքները (էլ. Մալուխների մասնակի կամ ամբողջական փոխարինում, դրանց մոնտաժման համար անհրաժեշտ ակսեսուարների փոխարինում նորերով այլն), որոնք ի հայտ են եկել ուսումնասիրության ժամանակ:
- Առաջարկվելիք բոլոր լուծումները պետք է համաձայնեցնել շահագործող «Արարատ» ՋՕԸ-ի համապատասխան մասնագետների հետ:

Ակնկալվող արդյունքները

«Արազափ-1» պոմպակայանի թերությունները վերացնելուց հետո ոռոգման ջուր մատակարարելու ընթացքում կկրճատվեն ջրի կորուստները, կպակասի պոմպակայանի շահագործման և պահպանման ծախսերը, կբարձրանա ջրամատակարարման կազմակերպման որակը, կավելանա ջրօգտագործողների թիվը, ոռոգվող հողերը 456 հա-ից կարող է հասնել 830 հա-ի:

Սույն առաջադրանքով նախատեսվում է իրականացնել վերակառուցման աշխատանքներ «Արազափ-1» պոմպակայանի մղման խողովակաշարի (1-ին կամ 2-րդ) վրա:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Այլուսակում բերված են յուրաքանչյուր օբյեկտի հակիրճ բնութագրերը: Դրանք բավարար են, որպեսզի մրցույթին մասնակցող նախագծային կազմակերպությունները գնահատեն նախատեսվող նախագծային աշխատանքների ծավալները և ներկայացնեն հավաստի և իրատեսական տեխնիկական և ֆինանսական առաջարկներ: Նախագծերի մշակման ժամանակ նախագծային կազմակերպությունը պարտադիր կերպով պետք է ճշտի բոլոր օբյեկտների աշխատանքների ծավալները: Այդ նպատակով Նախագծողը պետք է.

- վերլուծի առաջ եկած խնդիրները, որոնց պետք է տրվեն նախագծային համապատասխան լուծումներ,
- կատարի բոլոր անհրաժեշտ ելակետային տվյալների հավաքագրումը՝ հաշվի առնելով համապատասխան ՋՕԸ-ի առաջարկությունները,
- վերլուծի ընտրված բնակավայրերի օբյեկտների համար նախկինում կատարված աշխատանքների նյութերը,
- կատարի ոռոգման համակարգերի նախագծման համար ինժեներա-երկրաբանական, գեոդեզիական և այլ տիպի հետազոտական աշխատանքներ, որոնք կապահովեն ընդունված նախագծային լուծումների հիմնավորումը,
- կատարի գոյություն ունեցող ոռոգման համակարգերի տեխնիկական վիճակների ուսումնասիրություն և կազմի թերությունների ակտեր: Թերությունների ակտը պետք է լիովին գնահատի օբյեկտի վիճակը և հիմնավորի առաջարկվող կոնստրուկտիվ լուծումները վերանորոգման աշխատանքների իրականացման համար: Թերությունների ակտը կազմվում է Նախագծողի կողմից, ՋՕԸ-ի ներկայացուցիչների մասնակցությամբ,
- կազմված նախագիծը սահմանված կարգով համաձայնեցնի բոլոր շահագրգիռ կազմակերպությունների հետ,
- սահմանված կարգով փորձաքննության անցկացման արդյունքում, դիտողությունների առկայության դեպքում, կատարի ուղղումներ և լրամշակումներ՝ հաշվի առնելու փորձաքննության կողմից տրված դիտողությունները,
- կազմի շինարարական աշխատանքների կատարման համար օգտագործվող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ օգտագործվող շինարարական նյութերի, պատրաստվածքների հատկանիշների վերաբերյալ ներկայացնի մանրամասն և սպառիչ նկարագրություն,
- ճշգրտի նշված հիդրոտեխնիկական կառույցի սպասարկման տակ գտնվող գյուղատնտեսական հողատարածքների ջրապահանջարկը, դրա հիման վրա հաշվարկի ջրատնտեսական հաշվարկներով ջրապահանջարկի լիարժեք ծածկմանը բավարարող նախագծվող ջրացքի ջրթողունակությունը:

Նախագծային կազմակերպությունը պետք է ներկայացնի հիմնական տեխնիկական լուծումների մշակված տարբերակներ և գնահատի դրանց արժեքը: Պատվիրատուն իրավունք ունի նախագծային կազմակերպության քննարկմանը ներկայացնել իր կողմից առաջարկվող տարբերակը: Նախագծային կազմակերպությունը պարտավոր է մինչև վերջնական ճարտարագիտական լուծումների ընդունումը քննարկի իր կողմից առաջարկվող լուծումները Պատվիրատուի և այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ համատեղ հանդիպման ժամանակ և միայն դրանից հետո անցնի մրցութային փաստաթղթերի թողարկմանը: Համատեղ հանդիպման արդյունքների մասին Պատվիրատուի կողմից կազմվում են համապատասխան արձանագրություններ:

Նախագծային կազմակերպությունը պետք է կազմի նախագծանախահաշվային փաստաթղթերը սահմանված ծավալով, կազմով ու բովանդակությամբ, ՀՀ գործող օրենսդրության ու տեխնիկական նորմերի, ստանդարտների և չափանիշների համաձայն և ապահովի տվյալ օբյեկտի շինարարական և վերահսկողական աշխատանքների ճիշտ կազմակերպումը և իրականացումը:

Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմված լինեն նախագծային մասից (բացատրագիր, գծագրեր, տեխնիկական մասնագրեր), աշխատանքների ծավալների ցուցակից և ճարտարագիտական նախահաշվից:

Խնդրո առարկա յուրաքանչյուր կառուցվածքի համար առանձին գծագրերի ներկայացում՝ համապատասխան մասնագրերով և ծավալաթերթ-նախահաշվով: Գծագրերը պետք է իրականացված լինեն համապատասխան մասշտաբով, նիշերով, խորությունը, բարձրությունը և երկարությունը բնութագրող չափման գծերով: Գծագրում ներկայացված կտրվածքի ընտրությունը և քանակը պետք է բնութագրի ամբողջ կառուցվածքը՝ ներկայացված բոլոր ծավալների ճշգրիտ հաշվարկով:

Կազմել Շինարարության ժամանակավոր շինությունների և նախապատրաստական համապատասխան աշխատանքների կազմակերպման, մանրամասն գծագրեր, մասնագրեր, նախահաշիվ, ինչպես նաև ծավալաթերթ-նախահաշիվ:

Կազմել շինմոնտաժային աշխատանքների անվտանգությունը, աշխատանքների կազմակերպումը, շրջակա միջավայրի պահպանությունը համաձայն ՀՀ գործող օրենսդրության ու տեխնիկական նորմերի, ստանդարտների և չափանիշների համաձայն:

Շինմոնտաժային աշխատանքների տեխնիկական պայմանների պատրաստում:

Շինմոնտաժային աշխատանքների ծախսերի հաշվարկ:

Շինմոնտաժային աշխատանքների ընդհանուր հաշվարկ (գաղտնի նախահաշիվ) առանձին մատակարարման ու շինարարական աշխատանքների և ներմուծվելիք բաղադրիչների համար:

Մանրամասն մասնագրեր՝ պահանջվող տեխնիկական և շահագործման սարքավորումների, պահեստամասերի, նորոգման նյութերի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների համար, որոնք պետք է գնվեն ծրագրի շրջանակներում:
Նյութերի և սարքավորումների առաքման ծախսերի հաշվարկ:
համապատասխան ՏԻՄ-ի հետ համաձայնեցնել ՀՏԿ-ի վերակառուցման ժամանակ աղբաթափման տեղը:
Նախագծողը պետք է գնահատի և առաջարկի ջրի տեղափոխման այլ տարբերակներ և ներկայացնի առաջարկված վերականգնման տարբերակի առավելությունները և տնտեսական շահութաբերությունը հիմնավորող համապատասխան հաշվարկներ:
Տեխնիկական պայմանների պատրաստում՝ նյութերի և սարքավորումների առաքման համար:
Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պարտավորվում է նախագծում կատարել շտկումներ իր հաշվին:

Գծագրեր

Գծագրերը պետք է հիմնված լինեն ճարտարագիտական հետազոտությունների, հաշվարկների և վերլուծությունների արդյունքների վրա: Գծագրերը պետք է պատրաստվեն բավարար աստիճանի մանրամասնություններով, այդ թվում՝ պարունակեն այնպիսի տեղեկություններ, որոնք հնարավորություն կընձեռեն կատարելու բարձր որակի շինարարություն, մատակարարել ջրակայուն նյութեր և ճշգրիտ որոշել աշխատանքների ծավալները: Մանրամասն նախագծային հաշվետվության մեջ մանրամասն նախագծի հիման վրա պատրաստվում և ներկայացվում է գծագրերի ցանկը, այդ թվում՝ տեղանքի հատակագծերը: Գծագրերի փաթեթը կազմված կլինի ընդհանուր գծագրերից, մանրամասն գծագրերից, երկայնական և լայնական կտրվածքներից, որտեղ կերևան աշխատանքների չափերը և անհրաժեշտ նյութերը: Գծագրերի ներկայացման, նրանց ձևի, քանակի և մասշտաբի, հետազոտական աշխատանքների մասին անհրաժեշտ մանրամասն տեղեկությունները նկարագրվում են գործող նորմատիվ ակտերում (ՇՆԱԿ-երում/շինարարական նորմերում և ՊՍ-երում (պետական ստանդարտներում):

Տեխնիկական մասնագրեր

Շինարարական աշխատանքների «Տեխնիկական մասնագրերը» ներառում են աշխատանքների կատարման դրույթների և պայմանների մանրամասն նկարագիրը, այդ թվում հստակ մասնագրեր, առանձին՝ համակարգերի խնդրո առարկա հատվածներում նախատեսվող կառուցվածքների համար, ներառելով կատարվելիք աշխատանքը, որոնք կլրացնեն համապատասխան գծագրերի վրա տեղ գտած տեղեկությունը: Մասնագրերի հիշյալ նկարագրերը կներառեն նաև ժամանակավոր շինություններ, աշխատանքների կազմակերպման մանրամասն գծագրեր և ծավալաթերթ և նախահաշիվ, ինչպես նաև ծավալաթերթ-նախահաշիվ, նախատեսվող տարածքին համապատասխան, աշխատանքների իրականացման մանրամասն նկարագրություն, ինչպես նաև տեխնիկական անվտանգություն՝ համաձայն տեղական և միջազգային չափանիշների: Բացի դրանից, դրանք ներառում են նյութերի, ապրանքների և ծառայությունների պահանջվող ստանդարտները և սահմանում Կապալառուի համար պարտադիր աշխատանքային ծրագիր: Տեխնիկական մասնագրերը կազմում են մրցութային փաստաթղթերի մաս:

Նախագծողի կողմից պատրաստված Տեխնիկական մասնագրերը պետք է ներառեն շինարարական աշխատանքների բոլոր այն տեսակները, որոնք անհրաժեշտ են կիրառել/իրականացնել շինարարության ընթացքում: Դրանք պետք է հատուկ հարմարեցված լինեն յուրաքանչյուր շինարարական փաթեթին:

Տեխնիկական մասնագրերի վերջում «Հավելվածի» տեսքով ներառվում են շինարարության գործընթացի անընդմեջությունն/անընդհատությունն ապահովող փաստաթղթեր, ինչպես օրինակ՝ հենանիշերի ցանկ, կոորդինատների ցանկ, գազատարների, մալուխների, ճանապարհների և այլ ենթակառուցվածքների հետ հատումների, անհրաժեշտության դեպքում՝ համակարգում շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում ջրի մատակարարման հնարավոր դադարեցման կամ վերսկսելու, ռեզերվային կամ թափոնային հրապարակների, հողի ձեռքբերման և այլ անհրաժեշտ հարցերի հետ կապված համաձայնեցումները գերատեսչական մարմինների հետ, փորձագիտական եզրակացություններ, տեխնիկական պայմաններ, ինչպես նաև Ծրագրի իրականացման համար պահանջվող փաստաթղթեր:

Աշխատանքների ծավալների ցուցակ-նախահաշիվ

Շինարարական աշխատանքների պլանավորման համաձայն՝ նախագծող կազմակերպությունը պետք է պատրաստի աշխատանքների ծավալների ճարտարագիտական նախահաշիվներ: Այդ ծավալները ներառվում են աղյուսակի մեջ, որը այսուհետև կկոչվի «Աշխատանքների ծավալների ցուցակ-նախահաշիվ» (ԱԾՑՆ), որն ընդգրկվում է մրցութային փաստաթղթերի մեջ: Կատարողը պետք է պատրաստի պարզեցված ԱԾՑՆ՝ յուրաքանչյուր համակարգի խնդրո առարկա հատվածում նախատեսվող կառույցի համար, որը կներառի բավարար քանակությամբ աշխատանքների նկարագրություն՝ ծավալների ողջամիտ մանրամասներով: ԱԾՑՆ-ն պետք է բաղկացած լինի ամփոփ ԱԾՑՆ-ից և ԱԾՑՆ-ի առանձին բաժիններից (հողային, բետոնային, տեխնոլոգիական և այլ աշխատանքների): ԱԾՑՆ-ի առանձին բաժինները ներկայացվում են առանձին էջերի վրա և համաձայնեցվում են Պատվիրատուի հետ:
ԱԾՑՆ-ն չպետք է ներառի շինարարության կազմակերպման, տեխնոլոգիական սխեմաների և գործարկման հետ կապված աշխատանքների ծավալները՝ բացառությամբ այն աշխատանքների, որոնք նախագծում սահմանվում են որպես պարտադիր աշխատանքներ:

Ճարտարագիտական նախահաշիվների պատրաստում

Շինարարական աշխատանքների «Ճարտարագիտական նախահաշիվները» չեն ներառվում մրցութային փաստաթղթերի մեջ: Դրանք նախատեսված են Պատվիրատուին օբյեկտի նախահաշվային արժեքի մասին տեղեկություն տալու համար: Նման տեղեկությունից օգտվելու հնարավորություն ունեցողներին կամ այն պատրաստողներին խստորեն արգելվում է դրա մասին հայտնել որևիցե մեկին, մասնավորապես կապալառուներին և մատակարարներին:
Անհրաժեշտության դեպքում, շինարարական նյութերի գների կտրուկ փոփոխության պարագայում, մինչև սահմանված կարգով կապալառուի ընտրությունը, պատվիրատուն իրեն իրավունք է վերապահում պայմանագրի կողմ հանդիսացող նախագծողից պահանջել նաև իր միջոցների հաշվին իրականացնել նախահաշվի վերահաշվարկ, նաև՝ սահմանված կարգով համապատասխան փորձաքննության դրական եզրակացության ապահովումը:

Ընդհանուր հավելվածներ

Ընդհանուր հավելվածներում ներառվում են այնպիսի նյութեր, որոնք անմիջականորեն կապված չեն շինարարության հետ, օրինակ՝

- առաջադրանքի պայմաններ,
- թերությունների ակտեր,
- հանդիպումների արձանագրություններ,
- եզրակացություններ (նյութերի փորձարկումների, կառույցների և այլնի մասին),
- նամակներ,
- լուսանկարներ,
- ԱԾՑՆ-ի հոդվածների և շուկայական գների համապատասխանության ցանկ,
- Սարքերի և սարքավորումների ցանկ,
- նախագծման ընթացքում պատրաստված այլ նյութեր:

Մրցութային փաստաթղթերի պատրաստում

Կատարողը պետք է մշակի և Պատվիրատուին ներկայացնի նաև մրցութային փաստաթղթերը, որոնք կներառեն.

- Գծագրեր,
- Տեխնիկական մասնագրեր,
- Աշխատանքների ծավալների ցուցակ,
- Հավելվածներ.
- Ճարտարագիտական ծավալաթերթ և նախահաշիվ, ինչպես նաև ծավալաթերթ-նախահաշիվ
- Ընդհանուր հավելվածներ:

Կատարողը պետք է պատրաստի առանձին մրցութային փաստաթղթեր, որի կազմը կհամաձայնեցվի Պատվիրատուի հետ, կազմվում է նաև առանձին նախահաշիվ:

Աշխատանքների ավարտը, տևողությունը և վճարումները

Ավարտված նախագծանախահաշվային փաստաթղթերի ամբողջ փաթեթը կնքված և ստորագրված ձևով ներկայացվում է պատվիրատուին: Փաստաթղթերի հանձնումը համարվում է ավարտված, պատվիրատուի կողմից վերջնական ընդունումից հետո:
Նախագծային կազմակերպության կողմից ներկայացվող փաստաթղթերը ներառում են
Բացատրական մաս և տեխնիկական մասնագրեր – 4 օրինակ հայերեն և 1 օրինակ ռուսերեն,
Գծագրական մաս – 4 օրինակ հայերեն և 1 օրինակ ռուսերեն,
Աշխատանքների ծավալների ցուցակ - 4 օրինակ հայերեն և 1 օրինակ ռուսերեն,
Աշխատանքի կազմակերպում- 2 օրինակ հայերեն և 1 օրինակ ռուսերեն
Ծավալաթերթ-նախահաշիվ - 2 օրինակ հայերեն և 1 օրինակ ռուսերեն
Շուկայական գներով ճարտարագիտական նախահաշիվներ - 2 օրինակ հայերեն և 1 օրինակ ռուսերեն,
Նախագծողը պետք է փաստաթղթերի հետ ներկայացնի նաև ամբողջական նախագծի էլեկտրոնային տարբերակ՝ հայերեն և ռուսերեն լեզուներով, նախագծի համապատասխան բաժինների համար կիրառելի Ms Word, Excell, pdf, AutoCad ֆորմատներով, էլ. կրիչով:
Փաստաթղթերը պետք է ստացած լինեն բոլոր շահագրգիռ կազմակերպությունների կողմից տրված համաձայնեցումները (ներառյալ ջրօգտագործողների ընկերության և համայնքի հետ): Գնման փաստաթղթերը անհրաժեշտության դեպքում պետք է ներառեն ուղղումներ և լրամշակումներ՝ փորձաքննության կողմից արած դիտողությունները հաշվի առնելու համար:

Կազմված նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննությունն իրականացնելու է Պատվիրատուն:

Նախագծային կազմակերպության պարտականությունները շինարարության ընթացքում

Շինարարության ընթացքում նախագծերում տեղ գտած թերությունները և բացթողումներն ուղղվում են նախագծային կազմակերպության կողմից և նրա հաշվին:

Կապալառուի կողմից ներկայացված հիմնավոր առաջարկությունները պետք է քննարկվեն ու հաստատվեն կամ չհաստատվեն նախագծային կազմակերպության կողմից՝ Պատվիրատուի անմիջական մասնակցությամբ:

Նախագծային կազմակերպությունը, ի դեմս նախագծի գլխավոր ճարտարագետի, պարտավոր է մասնակցել այն բոլոր հարցերի քննարկումներին, որոնք կպահանջվեն Պատվիրատուի կողմից: Նախագծային կազմակերպությունը նույնպես պետք է մասնակցի ցանկացած հանձնաժողովի աշխատանքներին (ներառյալ ընդունող հանձնաժողովները), որոնք կպահանջվեն Պատվիրատուի կողմից, ինչպես նաև պետք է ստորագրի «ըստ էության» ավարտված աշխատանքների, ինչպես նաև օբյեկտը վերջնական շահագործման հանձնելու վկայագրերը: Այդ աշխատանքների արժեքը պետք է հաշվի առնված լինի նախագծային կազմակերպության ֆինանսական առաջարկում:

Բացի դրանից, նախագծի գլխավոր ճարտարագետը պարտավոր է շինարարության աշխատանքների իրականացման ընթացքում կանոնավոր կերպով այցելել օբյեկտ՝ հեղինակային հսկողություն իրականացնելու համար:

**** Նախագծերի մշակման ժամանակ նախագծային կազմակերպությունը պարտադիր կերպով պետք է ճշտի բոլոր աշխատանքների ծավալները, սակայն նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման ընդհանուր տևողությունը և գինը չի կարող փոխվել:***

Իրականացվելիք աշխատանքների համառոտ նկարագիրը, գտնվելու վայրը, շահագործող ընկերությունը

Չափաբաժնի հերթական համարը	Չափաբաժնի անվանումը	Նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսվող իրականացվելիք աշխատանքների համառոտ բնութագիրը*	Շահագործող կազմակերպության անվանումը	Գտնվելու վայրը
1	«Արազափ-1» պոմպակայանի մղման խողովակաշարի հիմնանորոգում	Պոմպակայանի մոտ 4100 գծ.մ մղման խողովակաշարի (DN=530-720մմ) վերականգնում	«Արարատ» ՋՕԸ	ՀՀ Արարատի մարզ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Ջրային կոմիտե	«ԴԵԼՏԱՇԻՆ» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա	ք. Երևան, Ֆրունզեի փ., շ. 4/2, բն.21
Հ/Հ 900011567386	095 585535 deltashinllc@gmail.com
ՀՎՀՀ 02555816	Հ/Հ 1570050810520100
Կոմիտեի գլխավոր քարտուղար	ՀՎՀՀ 02277374
	տնօրեն
________ Ա. ՂԱԶԱՐՅԱՆ	________ Վ. ԿՈԲԵԼՅԱՆ
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՊԼ-000200, 1-ին դաս

(սերիան, համարը, դասը)

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ՝ ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԿՈՆՍՏՐՈՒԿՏՈՐԱԿԱՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՍԵՐԻ

(քաղաքաշինության բնագավառում գործունեության տեսակը)

ՏՐՎԱԾ Է

2024-08-13, «ԴԵԼՏԱՇԻՆ» ՍՊԸ

(լիցենզիան տալու տարեթիվը, ամիսը, օրը, քաղաքաշինության գործունեության սուբյեկտի անվանումը,

ՀՀ, ԵՐԵՎԱՆ, ՇԵՆԳԱՎԻԹ, ՖՐՈՒՆԶԵԻ Փ., 4/2, 21 ԲՆ.

գտնվելու վայրը՝ այդ թվում, անհատ ձեռնակատիրոջ դեպքում՝ անունը, ազգանունը և բնակության վայրը)

Գործողության ժամկետը՝ 13.08.2029թ.

(օրը, ամիսը, տարեթիվը)

ՀՍԿԻՉ ՀԱՄԱՐ՝ **UGE9-4C12-6618-FACE**
Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ

ՔՊՆ-000200-07

(ներդիրի սերիան, համարը)

«ԴԵԼՏԱՇԻՆ» ՍՊԸ

(լիցենզավորված քաղաքաշինության գործունեության սուբյեկտի անվանումը)

ՀԻԴՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ (ՀԻԴՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ, ՀԻԴՐՈԷՆԵՐԳԵՏԻԿ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ)

(քաղաքաշինության բնագավառում գործունեության ենթատեսակը)

13.08.2024թ.

(ներդիրը տալու օրը, ամիսը, տարեթիվը)

Գործողության ժամկետը՝ 13.08.2029թ.

(օրը, ամիսը, տարեթիվը)

Ներդիրը վավերական է լիցենզիայի առկայության դեպքում

ՀՍԿԻՉ ՀԱՄԱՐ՝ **UGC7-DCB1-136B-EEB6**

Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):

Պատասխանատու մասնագետի/ների անձնագրային տվյալներ	հավաստագրի սերիա	հավաստագրի համար	ստանալու օր, ամիս, տարեթիվ
ՎԱՀԱՆ ԿՈԲԵԼՅԱՆ	Հ	000863	2024-07-22

ՀՍԿԻՉ ՀԱՄԱՐ՝ **UGC7-DCB1-136B-EEB6**
Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Արարատի մարզ, Արարատ համայնք
(մարզը, համայնքը)

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

N 27/1 06. 03. 2024 թ.

Օբյեկտ

ՀՀ Արարատի մարզ, Արարատ համայնքի Արմաշ բնակավայրի վարչական տարածքում ,,Արագածի – 1 ,, ջրմպակայանի մղման խողովակաշարի հիմնանորոգման աշխատանքներ
(օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, ուժեղացում, վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն)

նախագծային փաստաթղթերի մշակման համար:
Միջինից բարձր ռիսկայնության աստիճան / III կատեգորիա /
(հակիրճ բնորոշումը, հզորությունը ռիսկայնության աստիճանը (կատեգորիան), նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը *Արարատի մարզ, Արարատ համայնք*
(մարզի, համայնքի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)

Կառուցապատող *ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտե*
(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը,
բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջադրանքի տրամադրման հիմքը *հայտ*
(կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված
կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթերը)

Առաջադրանքի գործողության ժամկետը *12 /տասն երկու/ ամիս*
(N 1 հավելվածի 32-րդ կետին համապատասխան)

ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

1. Հողամասը գտնվում է *Արարատի մարզ, Արարատ խոշորացված համայնք*
(հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)

2. (*) Հողամասի չափերը ----
(հողամասի սահմանները՝ կոորդինատային նշահարմամբ, մակերեսը (հա)

3. Հողամասի առկա վիճակը ----
(ռելիեֆի բնութագիրը, շենքերի (այդ թվում՝ քանդման ենթակա) առկայությունը (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարեկարգումը և այլն)

4. (*) Տրանսպորտային պայմանները *առկա են տրանսպորտի մոտեցման ճանապարհներ*
(ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մոտեցումները և այլն)

5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ (ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր) *ինժեներական ենթակառուցվածքների տեղադիրքը և ազդեցությունը կհստակեցվի մանրամասն նախագծման ընթացքում*

(նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա)

6. (*) Կից հողամասեր *համայնքային և քաղաքացու սեփականության հողեր, ընդհանուր օգտագործման տարածքներ*

(կից հողօգտագործողների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի)

7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ

--

(հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)

8. (*) Հատակագծային սահմանափակումներ *չկա*

(տեղանքում գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

9. Ճարտարապետահատակագծային պահանջներ *համաձայն քաղաքաշինական ծրագրային դրույթների*

(ելնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթեր պահանջներից, առկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմավորված (կազմավորվող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից)

9.1. (*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր) --

9.2. (*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր) --

9.3. թույլատրելի բարձրությունը (մետր) --

9.4. կառուցապատման խտության գործակիցը (կառույցի (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին) --

9.5. կառուցապատման տոկոսը (կառուցապատվող (անջրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%) --

9.6. կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի --

հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%)

9.7. այլ պահանջներ ______--______

10. Հողամասում գտնվող շենքերի ու շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը ______չկան______

11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները ______--______

12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ — Պահանջներ՝ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ր ցանցերի նկատմամբ

12.1. (*) ջրամատակարարում, կոյուղի, տաք ջրի մատակարարում ______կցվում է______
(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.2. (*) էլեկտրամատակարարում ______կցվում է______
(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների

12.3. (*) գազամատակարարում ______կցվում է______
(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների

12.4. (*) էլեկտրոնային հաղորդակցության մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը ______կցվում է______
(համաձայն N 1 հավելվածի 58-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված էլեկտրային տվյալների)

12.5. թույլ հոսանքներ ______--______

12.6. աղբահանություն — *Համաձայն ՇՄԱԳ-ի պահանջների*

13. Տարածքի ինժեներական նախապատրաստում — *Համաձայն գործող նորմերի պահանջների*
(ռելիեֆի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)

14. Բարեկարգում ______--______
(լանդշաֆտային պլանավորման վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր, ցանկապատում, գովազդ և այլն)

15. Շինարարական նյութեր — *Համաձայն նախագծի*
(շինարարական նյութերի օգտագործման վերաբերյալ առաջարկությունները)

16. Պաշտպանական կառույցներ ______--______
(արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության միջոցառումները)

17. Հակահրդեհային պահանջներ — *համաձայն ՀՀ-ում գործող հակահրդեհային նորմերի*
(հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)

18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ --

19. Շրջակա միջավայրի պահպանում *Համաձայն ՇՄԱԳ-ի պահանջների*
(շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու միջոցառումները)

20. Շինարարության կազմակերպում *Համաձայն քաղաքաշինական ծրագրային դրույթների և ծրագրի պահանջների*
(առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տնտեսության և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ)

21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը *12 /տասն երկու/ ամիս մեկ փուլ՝ աշխատանքային նախագիծ*
(նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ *Համաձայն ԽԾՊ-ի առաջադրանքների պայմանների*
(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծողի երաշխավորագիրը՝ դրա կատարելով համապատասխան իրավական ակտին)

23. Միջանկյալ համաձայնեցում *Արարատի համայնքապետարանի հետ*
(իրավասու մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շահագրգիռ մարմինների հետ էսքիզային նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև առաջադրանքի փոփոխման հնարավորությունը՝ N 1 հավելվածի 89-րդ կետով նախատեսված դեպքում)

24. Հասարակական քննարկումներ *հանրային քննարկում*
(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով)

25. Համաձայնեցումների կամ մասնագիտական եզրակացությունների ստացում *Համաձայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների*
(նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման՝ օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ)

26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում ----

27. Այլ պայմաններ ----

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Արազափ 1 պոմպակայանի, մղման խողովակաշարի առկա վիճակի ուսումնասիրման և թերությունների

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

27.04.2024թ.

Հանձնախմբի կազմը.

Վ. Կոբելյան – «ԴԵԼՏԱՇԻՆ» ՍՊԸ՝ տնօրեն

Ն. Սարգսյան – «ԴԵԼՏԱՇԻՆ» ՍՊԸ՝ ինժեներ

Ա. Ղուկասյան – «ԴԵԼՏԱՇԻՆ» ՍՊԸ՝ ինժեներ

Ն. Հակոբյան – «Արարատ» ՋՕԸ՝ գործադիր տնօրեն

Ա. Սարգսյան – «Արարատ» ՋՕԸ՝ գլխավոր ինժեներ

Տեխնիկական առաջադրանքի համաձայն կատարվել է Արազափ 1 պոմպակայանի հիդրոուժային սարքավորումների և մղման խողովակաշարերի ակնադիտական հետազոտություն: Հետազոտության նպատակն է բացահայտել պոմպակայանի հիդրոուժային սարքավորումների և մղման խողովակաշարերի տեխնիկական վիճակը և հետագա պիտանելիության աստիճանը:

Հետազոտությունների արդյունքում արձանագրվել է.

- Պոմպակայանի ջրընդունիչից սնվող խողովակը խցանված է:
- Պոմպակայանի ջրահեռացման համակարգը խցանված է:
- Գոյություն ունեցող 5 պոմպային ագրեգատները ֆիզիկապես և բարոյապես մաշված են, օգգ-ները նվազել են թույլատրելի սահմաններից, վերանորոգման ենթակա չեն:
- Շարքից դուրս են եկել պոմպակայանի հիդրոուժային սարքավորումները, հիմնականում չեն աշխատում:
- Պոմպակայանի մղման երեք խողովակաշարերը (ընդհանուր մոտ 9կմ) գտնվում են վթարային վիճակում, քայքայված են և շահագործման ժամանակ անընդհատ վթարվում են՝ խափանելով ոռոգման գործընթացը:

Ակնադիտական ուսումնասիրությունների և «Արարատ» ՋՕԸ, ներկայացուցիչների կողմից կատարված առաջարկությունների քննարկման արդյունքում որոշվեց

իրականացնել հետևյալ հրատապ միջոցառումները, որոնք այս պահի դրությամբ խիստ անհրաժեշտ են.

- Մաքրել պոմպակայանի ջրընդունիչից պոմպակայան զնացող D800մմ տրամագծի խողովակաշարը:
- Մաքրել պոմպակայանի ջրահեռացման համակարգի առկա D250մմ խողովակաշարերը:
- Վերազինել պոմպակայանը նոր պոմպային ագրեգատներով և սարքավորումներով:
- հիմնանորոգել մղման 3 խողովակաշարերը՝ վերականգնելով առկա ջրթողները:

Վ. Կոբելյան

Ն. Սարգսյան

Ա. Ղուկասյան

Ն. Հակոբյան

Ա. Սարգսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնք, ք.
Արարատ, Շահումյան 34, Հեռ. 060-88-55-55, ararat.municipality@gmail.com

N 1369

18 ապրիլ 2024թ.

<<ԴԵԼՏԱՇԻՆ>> ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ
ՎԱՀԱՆ ԿՈԲԵԼՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր Արազափ-1 պոմպակայանի մղման խողովակաշարի հիմնանորոգման աշխատանքային նախագծի մշակման և փաստաթղթերի կազմման համար հարցվող տեղեկատվության հայտնում ենք, որ իրականացվող

- Արազափ-1 պոմպակայանի I, II, III և վերին գոտու ոռոգելի հողերի մակերեսը /հաշվի առած հնարավոր հեռանկարները/ կազմում է 1510 հա մշակվող մշակաբույսերի՝ խաղող, առվույտ, բանջարաբոստանային, պտղատու այգիների կազմով:
- Արազափ-2 պոմպակայանի սպասարկման տակ և հեռանկարում սպասարկման տակ գտնվող ոռոգելի հողերի մակերեսը կազմում է 250հա մշակվող հեռանկարում մշակվող մշակաբույսերի խաղողի և պտղատու այգիների, բանջարաբոստանային կուլտուրաների կազմով:
- Ավելցուկային գրունտի և շին աղբի տեղափոխման համար թափոնակույտերի և անհրաժեշտության դեպքում փափուկ գրունտի բերման տարածքների միջին հեռավորությունները պոմպակայանի մղման խողովակաշարերից կազմում է 2 կմ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԿԱՏ. Գլխավոր մասնագետ՝ Գ. Բալոյան

«ԱՐԱՐԱՏ»
ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

"АРАРАТ"
ОБЩЕСТВО
ВОДОПОЛЬЗОВАТЕЛЕЙ

Հեռ./Tel/ (0234) 4-50-59
Ֆաքս/Fax/ (0234) 4-50-59
Էլ. փոստ /E-mail/ araratwua@mail.ru

№ 58 «17» «04» 2024թ.

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
ջրային կոմիտեի նախագահի տեղակալ
պարոն՝ **Վ. Մկրտչյանին**

Հարգելի պարոն Մկրտչյան.

Ի պատասխան Ձեր 2024թ. ապրիլի 16-ի թիվ 02.1/16/1819-2024 գրության ներկայացնում ենք <<Արազափ-1>> պոմպակայանի նախագծային աշխատանքների համար պահանջվող տեղեկատվությունը:

1. <<Արազափ-1>> պոմպակայանի I, II, III և վերին գոտու ոռոգելի հողերի մակերեսները ըստ մշակաբույսերի :Հավելված 1
2. <<Արազափ-2>> պոմպակայանը 2023թ. օգոստոսից շահագործելուց հետո սպասարկել է 90 հա հողատարածք: Արազափ-2 պոմպակայանի վերակառուցումից հետո հեռանկարում հնարավոր է ոռոգելի հողերի ընդհանուր մակերեսը դառնա 240 հա:
3. <<Արազափ-1>> պոմպակայանի մղման խողովակաշարի ապամոնտաժված խողովակների պահեստավորումը անհրաժեշտ է կատարել <<Արմաշ>> պոմպակայանի տարածքում, որը գտնվում է 7 ÷ 10 կիլոմետր հեռավորության վրա:
4. Շինարարական աղբի տեղափոխման վայրը կտա <<Արարատ>> համայնքապետարանը:

Հարգանքով՝

գործադիր տնօրեն՝ Ն. Հակոբյան

Կատարող՝ Ա.Սարգսյան
Հեռ՝ 043-02-90-90

<<Արազափ-1>>

հավելված 1

	Ընդամենը հա	Խաղող հա	Առվույտ հա	Տնամերձ հա	Բանջարաբոստանային հա	Պտղատու հա	Չի մշակվում հա
I գոտի	81	4	7	—	1,5	68,5	—
II գոտի	100	—	—	30	8	62	—
III գոտի	324	30	—	26	3	260	5
Վերին գոտի	710	120	—	—	—	240	350
Ընդամենը առաջին աստիճան	1215	—	—	—	—	—	—
Արազափ-2 (վերամղում)	90	65	—	—	—	15	10
Հեռանկարում վերամղումը կավելանա	150	—	—	—	—	—	150
Ընդամենը	1455	219	7	56	12,5	645,5	515

WILO Mather and Platt Pumps Pvt. Ltd

Technical DataSheet

Customer	Wilo Central Asia	Consultant	-
Project	Arazap	Application	Water Supply
Pump Model	250 PJ PLURO AS_S	Reference Curve	250 PJ PLURO AS_S_50_4_A_R01

Speed	Frequency	Duty Point :		Suction :	Discharge :
1490 RPM	50 Hz	Q = 888.0 m3/hr	H = 288.0 m	250 mm	250 mm

Customer Details

Address	-	Tag Number	Item_888_288
Enquiry Date	19/07/2024	Reference:	-
Offer Date	19/07/2024	Offer No	O_2024_01842

Operating Conditions

Capacity	888.0 m3/hr	Fluid	Water
Head	288.0 m	Specific Gravity *	1
NPSHA	-	Temperature	15 Deg C
Suction Pressure *	1 bar	Viscosity	1 cSt
System / Pump in System	Standalone / 1	Solid Size *	-
Total QTY	5	Frequency	50 Hz

Performance Data @DP

Efficiency	74.04 %	NPSHR	5.49 m
Input	940.63 kW	Shut Off Head	346 m
Max. Power	1171.88 kW	Stage	3
Speed	1490 RPM	Impeller Dia (Approx)	554 mm
Max allowable soft solid	9 mm	Pump Performance Std	ISO-9906-Gr2B

Motor Details

Motor make	null	Mounting	null
Series	null	Eff class	null
Specification	null		

Constructional Features

Type of Pump	MultiStage
Impeller Type	Closed
Bearing (DE/NDE)	-
Bearing Lubrication	Oil
Rotation (from coupling End)	CW
Recommended Power (Pole)	1100 kW (6kV, Soft Start)
Shaft Sealing	Mechanical Seal
Flange Type	B.S. 10 TABLE-H (FF)
Painting	Wilo Green
Pump GD2	-

MOC

Item Description	Specification
Delivery Cover	C.I. (IS:210 Gr FG260)
Impeller	A216 Gr. WCB
Middle Body	C.I. (IS:210 Gr FG260)
Neck Ring	C.I. (IS:210 Gr FG260)
Shaft	SS ASTM A 276 CL 410
Shaft Sleeve	SS ASTM A 276 CL 410
Suction Cover	C.I. (IS:210 Gr FG260)

Notes :
1.Suction Pressure more than Vapour Pressure of fluid.
2.NPSHA>NPSHR by atleast 0.5m
3.NPSHR at impeller CenterLine / Inlet.
4.Fluid is not aggressive towards pump components chemically / physically.
5. * Customer to confirm.
6. Please revalidate the prime mover selection with respect to Altitude from sea level and apply correction factors as applicable.

Technical matter is subjected to change without prior notice due to intensive Research & Development activities

WILO Mather and Platt Pumps Pvt. Ltd

Performance Chart

Customer	Wilo Central Asia				Liquid	Water	
Consultant	-				Specific Gravity	1	
Project	Arazap						
Application	Water Supply				Fluid Temperature	15	Deg C
Speed	Frequency	Pump Model 250 PJ PLURO AS_S			Solid Size	9	mm
1490 RPM	50 Hz	Flow 888.0 m3/hr	Head 288.0 m	Stage 3			



Input	940.63 kW	NPSHA	-	Size	Pump Nozzle	Recommended
PrimeMover Power	1100 kW	NPSHR	5.49 m	Suction (mm)	250	400
Eff	74.04 %	Shut Off Head	346 m	Discharge (mm)	250	300

Tag Number	Item_888_288	Offer No	O_2024_01842	Prepared By/Checked By	Swarup Kumar
				Date	19/07/2024

Note : 1.Pump Performance with ISO-9906-Gr2B 2. NPSHa should be at least 0.5 m higher than NPSHr

Technical matter is subjected to change without prior notice due to intensive Research & Development activities

indicated impeller diameter is approximate.

Reference: 250 PJ PLURO AS_S_50_4_A_R01

- Please revalidate the prime mover selection with respect to Altitude from sea level and apply correction factors as applicable.

WILO Mather and Platt Pumps Pvt. Ltd

Technical DataSheet

Customer	Wilo Central Asia	Consultant	-
Project	Arazap	Application	Water Supply
Pump Model	TERA SCH 350/580	Reference Curve	TERA 350-580_50_4_A-R01

Speed	Frequency	Duty Point :		Suction :	Discharge :
1490 RPM	50 Hz	Q = 1865.0 m3/hr	H = 111.28 m	450 mm	350 mm

Customer Details

Address	-	Tag Number	Item_1865_112_Option1
Enquiry Date	19/07/2024	Reference:	-
Offer Date	19/07/2024	Offer No	O_2024_01842

Operating Conditions

Capacity	1865.0 m3/hr	Fluid	Water
Head	111.28 m	Specific Gravity *	1
NPSHA	-	Temperature	15 Deg C
Suction Pressure *	1 bar	Viscosity	
System / Pump in System	Standalone / 1	Solid Size *	-
Total QTY	2	Frequency	50 Hz

Performance Data @DP

Efficiency	84.5 %	NPSHR	6.92 m
Input	668.86 kW	Shut Off Head	119 m
Max. Power	857.84 kW	Stage	1
Speed	1490 RPM	Impeller Dia (Approx)	575 mm
Max allowable soft solid	44 mm	Pump Performance Std	ISO-9906-Gr2B

Motor Details

Motor make	null	Mounting	null
Series	null	Eff class	null
Specification	null		

Constructional Features

Type of Pump	Split Case Pump
Impeller Type	Closed
Bearing (DE/NDE)	-
Bearing Lubrication	Oil
Rotation (from coupling End)	CW
Recommended Power (Pole)	800 kW
Shaft Sealing	MechSealonSleeve
Flange Type	EN 1092 (DIN PN16) FF
Painting	Wilo Green
Pump GD2	13.6

MOC

CASING: CI FG 260

IMPELLER: A216 Gr. WCB

NECK RING: LTB5

SHAFT & SLEEVE: SS410

Notes :
1.Suction Pressure more than Vapour Pressure of fluid.
2.NPSHA>NPSHR by atleast 0.5m
3.NPSHR at impeller CenterLine / Inlet.
4.Fluid is not aggressive towards pump components chemically / physically.
5. * Customer to confirm.
6. Please revalidate the prime mover selection with respect to Altitude from sea level and apply correction factors as applicable.

Technical matter is subjected to change without prior notice due to intensive Research & Development activities

WILO Mather and Platt Pumps Pvt. Ltd

Performance Chart

Customer	Wilo Central Asia					Liquid	Water	
Consultant	-					Specific Gravity	1	
Project	Arazap							
Application	Water Supply					Fluid Temperature	15	Deg C
Speed	Frequency	Pump Model	TERA SCH 350/580			Solid Size	44	mm
1490 RPM	50 Hz	Flow	1865.0 m3/hr	Head	111.28 m	Stage	1	



Input	668.86 kW	NPSHA	-	Size	Pump Nozzle	Recommended
PrimeMover Power	800 kW	NPSHR	6.92 m	Suction (mm)	450	600
Eff	84.5 %	Shut Off Head	119 m	Discharge (mm)	350	400

Tag Number	Item_1865_112_Option 1	Offer No	O_2024_01842	Prepared By/Checked By	Swarup Kumar
				Date	19/07/2024

Note : 1.Pump Performance with ISO-9906-Gr2B 2. NPSHa should be at least 0.5 m higher than NPSHr

Technical matter is subjected to change without prior notice due to intensive Research & Development activities

indicated impeller diameter is approximate.

Reference: TERA 350-580_50_4_A-R01

- Please revalidate the prime mover selection with respect to Altitude from sea level and apply correction factors as applicable.

«Արարատ» ՋՕԸ-ի փորձագետ
Ես համաձայնեցված եմ է ...
Ս. ...

համաձայնեցված է

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ... 04240194

Համաձայնեցված է
«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ
կոմունիկացիաներ չկան

«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ
ՑԱՆՑԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ
«ԱՐԱՐԱՏ»

«ՀԱՅԷԼՑԱՆՑ» ՓԲԸ
«ԱՐԱՔՍ» մասնաճյուղ
«ԱՐԱՐԱՏ» էլեկտրացանց
0,1520882

Արարատի ԳԳՄ-ի սպասարկման
ցանցերից պաշտպանող գոտի չկա,
որոնք Արարատի համայնքապետարան.

Տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար
Գ. Հարությունյան 11.07.24.

N



«ԴԵԼՏԱՇԻՆ» ՍՊԸ			Պատվիրատու - ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտե	Պայմանագիր N ՋԿ-ԳՀԾՁԲ-24/3-Ն
Ն. Գ. Ճ.	Վ. Կոբելյան		Արազափ-1 պոմպակայանի մղման խողովակաշարի հիմնանորոգում	
Նախագծ.	Ա. Ղուկասյան			
Ստուգեց	Ն. Սարգսյան		Արազափ-1 պոմպակայանի նախագծվող և գոյություն ունեցող մղման խողովակաշարերի համաձայնեցման հատակագիծ Մ 1:25000	Փուլ: Ա. Ն. / Թերթ: 1 / Թերթեր: 1

ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի կարիքների համար

«Արագած-1 պոմպակայանի մղման խողովակաշարի հիմնանորոգում»

Օբյեկտի նախատեսված աշխատանքների իրականացման համար կիրառվող նյութերի և կոնստրուկցիաների նվազագույն երաշխիքային ժամկետների ցանկ

Նյութի կամ կոնստրուկցիայի անվանումը	Համապատասխանեցման սերտիֆիկատի անհրաժեշտությունը	Երաշխիքային նվազագույն ժամկետ, տարի
Պողպատ	այո	40
Ցեմենտ	այո	1
Ավազ	այո	10
Խիճ	այո	10
Ներկանյութ	այո	5
Բիտում	այո	5

«ԴԵԼՏԱՇԻՆ» ՍՊԸ

տնօրեն՝ Վ.Կոբելյան

Նախագծի գլխավոր ճարտարագետ՝

Վ.Կոբելյան

ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի կարիքների համար

«Արազափ-1 պոմպակայանի մղման խողովակաշարի հիմնանորոգում»

օբյեկտի նախատեսված աշխատանքների իրականացման համար պահանջվող մասնագետների ցանկ

Մասնագիտության անվանումը	Պահանջվող կրթությունը	Ըստ մասնագիտության նվազագույն աշխատանքային ստաժը, տարի	Մասնագետների նվազագույն քանակը, մարդ
Ճարտարագետ-հիդրոտեխնիկ	բարձրագույն	5	2

«ԴԵԼՏԱՇԻՆ» ՍՊԸ

տնօրեն՝ Վ.Կոբելյան

Նախագծի գլխավոր ճարտարագետ՝

Վ.Կոբելյան

ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի կարիքների համար

«Արագածի-1 պոմպակայանի մղման խողովակաշարի հիմնանորոգում»

օբյեկտի նախատեսված աշխատանքների իրականացման համար պահանջվող տեխնիկական միջոցների և սարքավորումների ցանկ

Հ/Հ	Մեքենաների և մեխանիզմների անվանում	Մեքենաների մակնիշը և տիպը	Քանակ, հատ
1	*2*	*3*	*4*
1	Ավտոինքնաթափ	բեռնատվ. 10-14տ	2
2	Ավտոխողովակատեղափոխիչ	բեռնատվ. 25տ	2
3	Ավտոբետոնախառնիչ	տարողությունը 2մ^3	1
4	Ավտոամբարձիչ	բեռնատվ. 16տ	2
5	Բուլդոզեր	հզորությունը առնվազն 59կՎտ	1
6	Էքսկավատոր	շերեփի տարողությունը ըստ պահանջի	1
7	Խորքային վիբրատոր	ԻՎ	1
8	Ձեռքի պնեվմատոփիչ	-	1
9	Եռակցող ապարատ	պողպատի համար	2
10	Գլդոն ինքնագնաց	6տ	1
11	Նստակլյաց քարշիչ (седельный тягач) ЗИЛ-130 В1 կիսակցանքով (полуприцеп) ОДАЗ-885	20տ	1

«ԴԵԼՏԱՇԻՆ» ՍՊԸ

տնօրեն՝ Վ.Կոբեւյան

Նախագծի գլխավոր ճարտարագետ՝

Վ.Կոբեւյան

ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի կարիքների համար

<Արագածի-1 պոմպակայանի մղման խողովակաշարի հիմնանորոգում>

օբյեկտի նախատեսված անհապաղ աշխատանքների իրականացման համար պահանջվող լիցենզիաներ

1. Կապիտալ շինարարության իրականացում, ըստ քաղաքաշինության հետևյալ ոլորտի՝
   Հիդրոտեխնիկական

«ԴԵԼՏԱՇԻՆ» ՍՊԸ

տնօրեն՝ Վ.Կոբեյան

Նախագծի գլխավոր ճարտարագետ՝

Վ.Կոբեյան

ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի կարիքների համար

«Արազափ-1 պոմպակայանի մղման խողովակաշարի հիմնանորոգում»

Օբյեկտի նախատեսված աշխատանքների իրականացումից շահագործման նվազագույն երաշխիքային ժամկետների ցանկ

Վերականգնվող հատվածներ	Շահագործման երաշխիքային նվազագույն ժամկետ, տարի	Աղբյուրը և նորմատիվը
Միաձույլ բետոնե կառույց	30	Ըստ գրականության
Միաձույլ երկաթբետոնե կառույց	50	Ըստ գրականության
Հավաքովի ե/բետոնե սալեր	20-30	Ըստ գրականության
Հավաքովի երկաթբետոնե РП-40 տիպի վաքերով ջրանցք	25	Ըստ գրականության
Պողպատե խողովակներ և խողովակամրաններ	20-25	Ճիշտ շահագործման և պրոֆեսիոնալ մոնտաժի պայմաններում: Ըստ ինտերնատային տվյալների
Պողպատե փական Ф150-Ф600մմ	Ոչ պակաս քան10	Ըստ գրականության
Պողպատե հակադարձ կափույր Ф600մմ	10	Ըստ գրականության
Խցուկային կոմպենսատոր Ф500մմ, Ф600մմ	Միջինը 10	Ըստ գրականության
Պոմպ (Q=1865.0 մ3//ժ, H=111.28 մ, W=800 ԿՎտ) և (Q=888.0 մ3//ժ, H=288.0 մ, W=1100 ԿՎտ) պարամետրերի,	15	Ըստ ինտերնետային տվյալների, որից 5 տարին ավելանում է ֆիրմային կողմից տեխնիկական սպասարկման իրականացման պայմաններում
Մանոմետր	Ոչ պակաս քան 10	ԳՕՍՏ 2405-88
Վակուումոմետր	Ոչ պակաս քան 10	ԳՕՍՏ 2405-88
Օդահեռ Ф50մմ երկգործողության	Ոչ պակաս քան 12	Ըստ գրականության

Արտադրանքի վերջնական երաշխիքային ժամկետները պետք է ճշտել արտադրող կազմակերպության կողմից ներկայացվող տվյալների հիման վրա:
«ԴԵԼՏԱՇԻՆ» ՍՊԸ

տնօրեն՝ Վ.Կոբելյան

Նախագծի գլխավոր ճարտարագետ՝

Վ.Կոբելյան

ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի կարիքների համար

«Արագածի-1 պոմպակայանի մղման խողովակաշարի հիմնանորոգում»

օբյեկտի նախատեսված աշխատանքները իրականացնող կապալառու կազմակերպության նվազագույն երաշխիքային ժամկետներ

Մրցույթի հաղթող Կապալառու կազմակերպությունը 1 տարի երաշխիքային ժամկետում պարտավոր է վերացնել թերությունները իր կողմից իրականացված աշխատանքներում:

«ԴԵԼՏԱՇԻՆ» ՍՊԸ

տնօրեն՝ Վ.Կոբելյան

Նախագծի գլխավոր ճարտարագետ՝

Վ.Կոբելյան

| Φuʅ

ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի կարիքների համար

«Արագած-1 պոմպակայանի մղման խողովակաշարի հիմնանորոգում»
Փուլ I

Օբյեկտի նախատեսված աշխատանքների իրականացման համար կիրառվող նյութերի և կոնստրուկցիաների նվազագույն երաշխիքային ժամկետների ցանկ

Նյութի կամ կոնստրուկցիայի անվանումը	Համապատասխանեցման սերտիֆիկատի անհրաժեշտությունը	Երաշխիքային նվազագույն ժամկետ, տարի
Պողպատ	այո	40
Ցեմենտ	այո	1
Ավազ	այո	10
Խիճ	այո	10
Ներկանյութ	այո	5
Բիտում	այո	5

«ԴԵԼՏԱՇԻՆ» ՍՊԸ

տնօրեն՝ Վ.Կոբելյան

Նախագծի գլխավոր ճարտարագետ՝

Վ.Կոբելյան

ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի կարիքների համար

«Արագածի-1 պոմպակայանի մղման խողովակաշարի հիմնանորոգում»

Փուլ I

օբյեկտի նախատեսված աշխատանքների իրականացման համար պահանջվող մասնագետների ցանկ

Մասնագիտության անվանումը	Պահանջվող կրթությունը	Ըստ մասնագիտության նվազագույն աշխատանքային ստաժը, տարի	Մասնագետների նվազագույն քանակը, մարդ
Ճարտարագետ-հիդրոտեխնիկ	բարձրագույն	5	2

«ԴԵԼՏԱՇԻՆ» ՍՊԸ

տնօրեն՝ Վ.Կոբելյան

Նախագծի գլխավոր ճարտարագետ՝

Վ.Կոբելյան

ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի կարիքների համար

«Արագած-1 պոմպակայանի մղման խողովակաշարի հիմնանորոգում»

Փուլ I

օբյեկտի նախատեսված աշխատանքների իրականացման համար պահանջվող տեխնիկական միջոցների և սարքավորումների ցանկ

Հ/Հ	Մեքենաների և մեխանիզմների անվանում	Մեքենաների մակնիշը և տիպը	Քանակ, հատ
1	*2*	*3*	*4*
1	Ավտոինքնաթափ	բեռնատվ. 10-14տ	4
2	Ավտոխողովակատեղափոխիչ	բեռնատվ. 25տ	4
3	Ավտոբետոնախառնիչ	տարողությունը 2մ³	2
4	Ավտոամբարձիչ	բեռնատվ. 16տ	7
5	Բուլդոզեր	հզորությունը առնվազն 59կՎտ	1
6	Էքսկավատոր	շերեփի տարողությունը ըստ պահանջի	1
7	Խորքային վիբրատոր	ԻՎ	2
8	Ձեռքի պնեվմատոփիչ	-	3
9	Եռակցող ապարատ	պողպատի համար	7
10	Գլդոն ինքնագնաց	6տ	1
11	Նստակյաց քարշիչ (седельный тягач) ЗИЛ-130 В1 կիսակցանքով (полуприцеп) ОДАЗ-885	20տ	1

«ԴԵԼՏԱՇԻՆ» ՍՊԸ

տնօրեն՝ Վ.Կոբեյան

Նախագծի գլխավոր ճարտարագետ՝

Վ.Կոբեյան

<u>ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի կարիքների համար</u>

<u>«Արագած-1 պոմպակայանի մղման խողովակաշարի հիմնանորոգում»</u>

Փուլ I

օբյեկտի նախատեսված անհապաղ աշխատանքների իրականացման համար պահանջվող լիցենզիաներ

1. Կապիտալ շինարարության իրականացում, ըստ քաղաքաշինության հետևյալ ոլորտի՝
   Հիդրոտեխնիկական

«ԴԵԼՏԱՇԻՆ» ՍՊԸ

տնօրեն՝ Վ.Կոբելյան

Նախագծի գլխավոր ճարտարագետ՝

Վ.Կոբելյան

ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի կարիքների համար

«Արազափ-1 պոմպակայանի մղման խողովակաշարի հիմնանորոգում»
Փուլ I

Օբյեկտի նախատեսված աշխատանքների իրականացումից շահագործման նվազագույն երաշխիքային ժամկետների ցանկ

Վերականգնվող հատվածներ	Շահագործման երաշխիքային նվազագույն ժամկետ, տարի	Աղբյուրը և նորմատիվը
Միաձույլ բետոնե կառույց	30	Ըստ գրականության
Միաձույլ երկաթբետոնե կառույց	50	Ըստ գրականության
Հավաքովի ե/բետոնե սալեր	20-30	Ըստ գրականության
Հավաքովի երկաթբետոնե РП-40 տիպի վաքերով ջրանցք	25	Ըստ գրականության
Պողպատե խողովակներ և խողովակաամրաններ	20-25	Ճիշտ շահագործման և պրոֆեսիոնալ մոնտաժի պայմաններում: Ըստ ինտերնատային տվյալների
Պողպատե փական Φ150-Φ600մմ	Ոչ պակաս քան10	Ըստ գրականության
Պողպատե հակադարձ կափույր Φ500-Φ600մմ	10	Ըստ գրականության
Խցուկային կոմպենսատոր Φ500մմ, Φ600մմ	Միջինը 10	Ըստ գրականության
Օդահեռ Φ50մմ երկգործողության	Ոչ պակաս քան 12	Ըստ գրականության

Արտադրանքի վերջնական երաշխիքային ժամկետները պետք է ճշտել արտադրող կազմակերպության կողմից ներկայացվող տվյալների հիման վրա:
«ԴԵԼՏԱՇԻՆ» ՍՊԸ

տնօրեն՝ Վ.Կոբելյան

Նախագծի գլխավոր ճարտարագետ՝

Վ.Կոբելյան

ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի կարիքների համար

«Արագածի-1 պոմպակայանի մղման խողովակաշարի հիմնանորոգում»

օբյեկտի նախատեսված աշխատանքները իրականացնող կապալառու
կազմակերպության նվազագույն երաշխիքային ժամկետներ

Մրցույթի հաղթող Կապալառու կազմակերպությունը 1 տարի երաշխիքային ժամկետում պարտավոր է վերացնել թերությունները իր կողմից իրականացված աշխատանքներում:

«ԴԵԼՏԱՇԻՆ» ՍՊԸ

տնօրեն՝ Վ.Կոբելյան

Նախագծի գլխավոր ճարտարագետ՝

Վ.Կոբելյան